ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 779 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի N 298-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (ՀՎՀՀ՝ 01573524) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2022 թվականի մայիսի 5-ի «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացվող «Բնապահպանական պայմանների բարելավում» ծրագրի մասին» N 298-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՎԱՆՏԵԽՄԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 06956941) 2023 թվականի հոկտեմբերի 12-ին կնքված՝ N ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԱՊՁԲ-23/113-1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հորատման սարքերի, խոտհնձիչ մեքենաների, սաղավարտների, ականջակալների և ժայռամագլցման կոշիկների ձեռքբերում՝ 13,126,667 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Մ. Ա. Կիրակոսյաններ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 02890282) 2023 թվականի հոկտեմբերի 12-ին կնքված՝ N ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԱՊՁԲ-23/113-2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է քլունգների, թոխրերի, բահերի, աշխատանքային ձեռնոցների և պաշտպանիչ հատուկ ակնոցների ձեռքբերում՝ 150,833 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

07.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ